

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հրապարակված է՝ 18.04.2013

Վերջին ժամկետը՝ 16.04.2015

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ օրենք) 30-րդ հոդվածի 5-րդ մասը «աշխատակազմի» բառից հետո լրացնել «(բացառությամբ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի)» բառերով:
Հոդված 2. Օրենքի 31-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«Հոդված 31.

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

1. Աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների վարձատրությունն օրենքով սահմանված կարգով կատարվում է համայնքի բյուջեի հաշվին:
2. Յուրաքանչյուր աշխատողի աշխատավարձը չի կարող գերազանցել տվյալ համայնքի ղեկավարի աշխատավարձի 80 տոկոսը:
3. Աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը:
4. Աշխատավարձը ներառում է պաշտոնային դրույթաչափը, հավելավճարները, պարգևատրումները և փոխհատուցումները:
5. Հավելավճարների կիրառման կարգն ու պայմանները, ինչպես նաև աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատողների վարձատրության չափը և դրա փոփոխությունները համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին:
6. Աշխատանքի վարձատրության հետ կապված սույն հոդվածով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով և այլ օրենքներով:
Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված օրենքի նախագիծը մշակվել է ելնելով Երևանի քաղաքապետարանի առանձնահատկություններով պայմանավորված՝ աշխատակազմին ներկայացվող պահանջներից, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 181-րդ հոդվածից:

ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն աշխատակազմի կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումներ, որոնց հաստիքային միավորների նվազագույն թվաքանակը

սահմանում է պետական լիազորված մարմինը: Օրենքի նշված դրույթի հետ կապված խնդիրներն ի հայտ են եկել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով «քաղաքապետարանի աշխատակազմ» հասկացության ներմուծմամբ, որն իր մեջ ընդգրկում է ինչպես Երևանի, այնպես էլ ՀՀ մյուս քաղաքապետարանների աշխատակազմերը: Այս առումով՝ գոյություն ունի որոշակի անհամապատասխանություն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի միջև:

2. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն ՏԻՄ-երի ծառայողների աշխատանքի վարձատրության կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով: Այս առումով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելու կարիք ունի:

ՏՎՅԱԼ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված օրենքի նախագիծը տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականության փոփոխություն չի նախատեսում:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԲՆՈՒՅԹԸ

Ներկայացված օրենքի նախագծի նպատակը՝

1. Երևանի քաղաքապետարանի մասով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով աշխատակազմերին ներկայացվող իմպերատիվ պահանջի, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի միջև առկա անհամապատասխանությունների վերացումն է,
2. աշխատակազմի աշխատակիցների, այդ թվում՝ համայնքային ծառայողների, աշխատանքի վարձատրության կարգի և պայմանների վերաբերյալ ընդհանուր դրույթների սահմանումն է:

ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻՆՔ

Նախագիծը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի համայնքային ծառայության հարցերի վարչության կողմից:

ԱԿՆԿԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից «վարչություն» և (կամ) «բաժին» տեսակի ստորաբաժանումներով կառուցվածքի ձևավորման հնարավորությունն է, ինչպես նաև բոլոր համայնքների համար աշխատանքի վարձատրության ընդհանուր կարգի և պայմանների, իսկ յուրաքանչյուր առանձին համայնքի դեպքում՝ նաև աշխատանքի վարձատրության չափի հաշվարկման միատեսակ կարգի ներմուծումն է: